ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

<<Սիսիանի ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

«Ինքնուրույն ուսումնառության ազդեցությունը աշակերտների ընթացիկ առաջադիմության վրա»

Վերապատրաստող՝ Սվետլանա Սարգսյան

Ներկայացնող՝ Կապանի Հունան Ավետիսյանի հ.9 ավագ դպրոցի կենսաբանության ուսուցիչ Նունե Ջավադյան

Նախաբան

Հետազոտական աշխատանքի նպատակն ինքնուրույն ուսումնառության կիրառության ազդեցությունն է աշակերտների ընթացիկ առաջադիմության վրա: Ակնկալում եմ հետազոտության ավարտին գրանցել աշակերտների առաջադիմության աճ՝ ծանոթ լինելով նրանց ունակություններին և մոտիվացիային:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել հետազոտության թեմային՝ ինքնուրույն ուսումնառությանը համապատասխան գրականություն և գտնել դասարանում ինքնուրույն ուսումնառության միջոցով աշակերտների ընթացիկ առաջադիմության աճի հնարավոր տարբերակներ: 2. Մշակել դասապլաններ 6 դասերի համար՝ դասերն անցկացնել հետևյալ ընդհանուր ձևաչափով. դասերի ընթացքում աշակերտներին հանձնարարել տարբեր բնույթի աշխատանքներ՝ ինքնուրույն ուսումնառությամբ կատարելու համար. տեսական դաս, գործնական աշխատանք, խնդիրների լուծում, հարցադրումների կազմում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում: Հանձնարարությունը տալուց հետո հետևել եմ նրանց աշխատանքին, անհրաժեշտության դեպքում ուղղորդել, ապա կատարել հարցում, լսել բոլորի պատասխանները, կարծիքները, տրամադրել հետադարձ կապ,միասին քննարկել ենք թյուրըմբռնումները:

3. Կազմել հարցաթերթիկներ ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ՝ աշակերտների և գործընկերների կողմից լրացնելու համար, այնուհետև վերլուծել դրանց տվյալները՝ որպես վկայություններ:

Հետազոտական համատեքստ /գրականության ակնարկ

Ի՞նչ է ինքնուրույն ուսումնառությունը

Ինքնուրույն ուսումնառությունը ժամանակակից կրթության ռազմավարություններից մեկն է, ուսումնառության առաջատար եղանակ, որի հիմքում ընկած են սովորողների կողմից գիտելիքների, հմտությունների ինքնուրույն ձեռքբերման, դրանց կիրառման, սովորողի `իր ինքնակառավարման, ինքնուրույն վերլուծության, ինքնամշտադիտարկման, մոտիվացիայի բարձրացման գործընթացները: Իհարկե, այդ ամենն իրականացնելու համար մեծ դերակատարում ունի ուսուցիչը: Ինքնուրույն ուսումնառությանը նպաստող կարևոր գործոններից են ուսուցչի և սովորողների միջև փոխադարձ վստահությունն ու պատասխանատվությունը: Դասավանդման այս մեթոդը ուսուցչից շատ ջանքեր է պահանջում վերջնարդյունքի հասնելու համար: Ինքնուրույն ուսումնառության կարևոր բաղադրիչ է հանդիսանում ուսումնառության գործընթացի պատասխանատվությունն

ուսուցչից աշակերտին փոխանցելը, որը պետք է կատարել քայլ առ քայլ: Ուսուցիչն այդ դեպքում հանդես է գալիս կազմակերպողի, «մարզչի» (Meyer et al.,2008) դերում: Նա տալիս է հանձնարարությունը, հաշվի առնելով աշակերտների ուսումնառության ոճերը: Ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ կան տարբեր սահմանումներ. այն կարելի է սահմանել նաև որպես մեկ անհատի կողմից կազմակերպված ուսումնառության ձև (http://didacts.ru/termin/samostojatelnoe-obuchenie.html), կամ ինքնուրույն ուսումնառությունը ենթադրում է դասընթաց առանց մարզչի մասնակցության, տրամադրված նյութերի հիման վրա. դրանք կարող են լինել տպագիր նյութեր, տեսանյութեր, առցանց դասընթացներ և այլն: Սա հնարավորություն է ուսումնառելու/սովորելու այն ժամանակ, երբ հարմար է (http: //bogushtime. com/trainings/ online_courses): Ինքնուրույն ուսումնառության արդյունավետության համար շատ կարևոր է գործողությունների պլան մշակելը, որոշակի առանցքային հարցերին պատասխանելը՝ որտե՞ղ ենք, ու՞ր ենք գնում, ինչպե՞ս հասնել: Կարևոր է նաև հետևյալ հարցերի պատասխանը՝ ի՞նչ նպատակով եմ ես սա անում, որտե՞ղ եմ կիրառելու, ի՞նչ կտա ինձ:

Ինքնուրույն ուսումնառության հետ կապված ցանկացած աշխատանքի համար պետք է գործողությունների պլան կազմել, սահմանել առաջնահերթությունները, ժամկետները՝ խառնաշփոթից խուսափելու համար:

Այս թեման շատ հետաքրքրեց ինձ, փորձեցի պարզել, թե արդյոք աշակերտները կարող են սովորել ինքնուրույն, աստիճանաբար նվազեցնելով ուսուցչի մասնակցությունը ուսումնառության ընթացքում, հասցնելով մինիմալի: Սովորողները , նրանց ծնողները, ուսուցիչներից շատերը հիմնականում սովոր են, որ ուսուցիչը պարտադիր պետք է մանրամասնորեն բացատրի դասը, դասապրոցեսում շատ ժամանակ հատկացնի դրան, աշակերտներն էլ ավելի շատ լսողի, քան ակտիվ մասնակցի դերում լինեն: Բայց ես կարծում եմ, որ այս մոտեցումը վաղուց սպառել է իրեն: Աշակերտները պետք է լինեն ակտիվ ուսումնառողներ, կարողանան ինքնուրույն սովորել, ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ լրացուցիչ աղբյուրներ փնտրել, տեղեկույթը մշակել, մտապահել, համագործակցել ընկերների հետ, սովորեցնել նրանց ու սովորել նրանցից: Դրա շնորհիվ աշակերտներն ավելի ինքնուրույն ու նախաձեռնող կլինեն, որը կօգնի նրանց հետագայում. ԲՈՒՀ- ում սովորելու ընթացքում, աշխատանքում, կյանքում հույսը դնել իրենց վրա, ավելի պատասխանատու լինել:

«Ինչպ՞ես կարող են աշակերտնեն ուսումնառության ընթացքումը նվազագույնի հասցնել ուսուցչի մասնակցությունը: Ուսուցչի կատարած աշխատանքը կարել է փոխարինել ուսումնական նյութով կամ համակարգչային ուսուցողական ծրագրերով: Սակայն ինքնուրույն ուսումնառության դեպքում կիրառվում է արմատապես տարբերվող մոտեցում. Չկա ուսուցիչ, չկան հատուկ մշակված ուսուցողական ծրագրեր: Դրա փոխարեն

սովորողները սովորում են ինքնուրույն, ինչպես նաև սովորեցնում են իրար: Սա տեղեկատվական և ուսուցանող տեխնոլոգիաների, տեղեկատվական - հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության ամենալավ տարբերակն է»(Дж. Петти, 2010, Современное обучение, ст.40): ՏՀՏ-ի կիրառությունն ինքնուրույն ուսումնառության ընթացքում կարևորվում է նրանով, որ այն հնարավորություն է տալիս արագ գնահատելու, մեծացնում է տեղեկատվության հասանելիության արագությունը, ծավալը, հաղորդակցման միջոց է ինչպես աշակերտների միջև, այնպես էլ ուսուցիչների և աշակերտների միջև:

Տարբեր ժամանակներում, տարբեր հետազոտողներ, տարբեր երկրներում հետազոտություններ են անցկացրել ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ, կատարել են եզրահանգումներ, որոնցում շատ ընդհանրություններ կան:

Ռուսական « Современные проблемы науки и образования. – 2014. – № 2» ամսագրում խոսվում է այն մասին, որ մանկավարժության և հոգեբանության մեջ ինքնավարությունը դիտվում է որպես մարդու անհատական դիրքորոշում, որը բնութագրվում է ինքնուրույնությամբ և վարքագծի, նպատակների և մոտիվների ընտության անկախությամբ: Այն ընկած է մարդու, որպես ինքնուրույն, մտածող և պատասխանատու էակ ձևավորման հիմքում: Ինքնավարությունը շատ կարևոր է նաև կրթության և ուսուցման գործընթացներում: Օտար լեզուների ուսուցմանն, ուսումնասիրմանն ուղղված Եվրոպայի խորհրդի հրատարակություններից մեկում ինքնավարությունը բնորոշվում է որպես սեփական կրթությունը կառավարելու ունակություն, որին տիրապետելու համար սովողները պետք է որոշակի պատասխանատվություն վերցնեն իրենց վրա: Սակայն դա ոչ մի դեպքում չպիտի բացառի աշակերտի ներկայությունը դասարանում, պարզապես, վերանայվում են ուսուցչի և սովողի դերերը դասապրոցսում: Ուսուցիչը և սովորողները դառնում են ուսումնառության գործընթացի ակտիվ մասնակիցներ, սովողները վերահսկում են սեփական ուսումնառությունը: Ուսուցիչը դադարում է ինֆորմացիայի միակ աղբյուրը լինելուց: Նա մշակում է տարաբնույթ առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքների համար: Դասարանում ստեղծվում է համագործակցության, փոխօգնության մթնոլորտ (Григорьева Е. Я., Малеева Е. А. АВТОНОМИЯ УЧАЩИХСЯ КАК ПРИНЦИП ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ // Современные проблемы науки и образования. – 2014. – № 2.) : Վերը նշվածից պարզ դարձավ, որ ինքնուրույն ուսումնառությունը և ինքնավարությունն այս պարագայում գրեթե նույն իմաստն ունեն:

Ինքնուրույն ուսումնառությունը ենթադրում է նաև ինքնակառավարվող ուսուցում, աշակերտների, ուսանողնորի ակտիվ մասնակցություն դպրոցի կամ համալսարանի կրթական գործընթացներին: Սիդնեյում (Ավստրալիա) կատարված հետազոտուլյուններում նշվում է , որ մագիստրատուրայում ներգրավված ուսանողներին հորդորում են ակտիվ մասնակցություն ունենալ հետազոտողների

համայնքի գերծունեությանը, մշակել հետազոտողի ուղեցույց, որը կնպաստի նրանց ինքնուրույն ուսումնառությանը և կմեծացնի սովորելու ցանկությունը: Սիդնեյի համալսարանի «Սոցիոլոգիա և իրավագիտություն» բաժնի ուսանողները մասնակցում են տարբեր համատեղ հետազոտական աշխատանքների, իրենց հասակակիցների գրավոր աշխատանքների քննարկմանը, գնահատմանը, հետադարձ կապ են ստանում ուսուցիչներից: Հաղորդակցման այս բոլոր ձևերը կազմում են նրանց ուսումնառության անքակտելի մաս (Mick Healey, 2014): Նույն աշխատության մեջ նշվում է, որ ԱՄՆ-ի Ինդիանա նահանգի համալսարանի ուսանողները սեփական նախաձեռնությամբ կատարեցին պատմական փաստերի ինքնուրույն հետազոտություն, օրինակ, տեսահարցազրույց վերցրին 104-ամյա մի տատիկից, ում ապուպապերը եղել են ստրուկներ: Մեկ այլ ուսանող հարցազրույց էր վերցրել հոլոքոստից փրկված մի հրեայից: Այս աշխատանքները հետագայում որպես ուսումնական նյութ կարող են օգտագործվել պատմության դասերի ընթացքում: Սրանք ինքնուրույն ուսումնառության արդյունքում ստեղծված արժեքավոր աշխատանքներ են, որոնք կարելի է կիրառել ապագա ուսանողների կամ աշակերտների ուսումնառության ընթացքում: Ուսանողների նշված աշխատանքները հաջողությամ կարող են կատարել նաև աշակերտները,պարզապես սկզբում նրանց կարելի է ուղղորդել, ապա իրենք սեփական նախաձեռնությամբ կանեն նմանատիպ աշխատանքներ, ներգրավելով իրենց ընկերներին: Ինքնուրույն ուսումնառության երկարաժամկետ աշխատանքների օրինակներից է նախագծային աշխատանքը: Դրա համար պետք է մշակել պլան, սահմանել ժամկետներ, հավաքել վկայություններ, վերլուծել դրանք և եզրահանգում կատարել: Օրինակ, կարելի է ուսումնասիրել տարբեր ջերմաստիճաններում շերեփուկից գորտի առաջացման տևողությունը:

Դպրոցը աշակերտի մոտ ձևավորում և զարգացնում է ինքնուրույն ուսումնառությունը՝ որպես կարողություն, որը հետագայում շարունակվում է բուհում, իսկ հետո՝ աշխատանքում: Այն շատ կարևոր կարողություն է ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայելու, արագ փոփոխվող հասարակական կյանքին հարմարվելու, ինքնադրսևորվելու համար: Ինքնուրույն սովորելու և գործելու հմտությունները կարևորվում են նաև գործատուների կողմից: Նրանց կողմից ավելի բարձր են գնահատվում այն ուսանողները, ովքեր ինքնուրույն կարող են մտածել, գործել, կառավարել իրենց վարքը: Երբ առաջին կուրսեցիները համալսարան են ընդունվում, նրանք ունեն գիտելիքների որոշակի պաշար, բայց որոշ ժամանակ հետո զգացվում է բարձրագույն կրթության ազդեցությունը նրանց ինքնուրույնության վրա: Ինքնուրույն ուսումնառությունը նրանց մոտ ձևավորում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են համառությունը, շահագրգռվածությունը, հետաքրքրասիրությունը, ձախողման ընկալումն ու առաջընթացի ձգտումը, մոտիվացիայի շարունակական աճը, ինքնագնահատումը (Della M. A. Fazey & John A. Fazey Published online: 25 Aug 2010):

Ինքնուրույն ուսումնառության գնահատման գործիքներ

Ինքնուրույն ուսումնառության համար հանձնարարված առաջադրանքների արդյունքները պարտադիր գնահատվում են: Ինքնուրույն ուսումնառության արդյունավետության գնահատման կարևոր գործիքներ են ինքնաստուգումն ու ինքնագնահատումը: Դա կարելի է անել տարբեր միջոցներով՝ թեստեր լրացնելով, սովորածի վերաբերյալ փոքր շարադրություն գրելով, հարց ու պատասխանի միջոցով: Սրանք հնարավորություն կտան պարզելու առաջընթացն ու թերացումները, որոնց մասին կաելի է կարծիքներ փոխանակել ընկերների կամ ուսուցչի հետ, քննարկել հետագա անելիքները: Սովորողներին տրվող առաջադրանքների կատարման ընթացքում ուսուցիչն օգնում է ինքնուրույն աշխատելու հմտությունների զարգացմանը, բայց ոչ կոնկրետ թեմայի յուրացմանը: Ընդ որում, կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հանձնարարվող արաջադրանքները պետք է բաժանել մասերի՝ աստիճանաբար մեծացնելով ծավալը: Սկզբում ուսուցիչը կարող է տրամադրել տեղեկատվության աղբյուրներ, բայց ի վերջո, աշակերտներն իրենք պետք է փնտրեն ու գտնեն, հատկապես, որ այժմ դրա հնարավորությունները մեծ են: Նրանք պետք է կարողանան աշխատել մեծածավալ ու փոքրածավալ նյութերի հետ: Ուսուցիչն այս պարագայում կարող է սեփական օրինակով ցույց տալ, թե ինչպես կարելի է նյութն ավելի արագ յուրացնել և երկար մտապահել: Սեփական փորձառությունից կարող եմ նշել, որ որոշ թեմաներ սովորելիս աշակերտներին բերում եմ իմ օրինակը՝ սովորել աղյուսակների, գծապատկերների, նկարելու միջոցով(օրինակ՝ ծաղիկ, բջիջ, օրգանոիդ, օրգան, գործընթաց և այլն), անհրաժեշտության դեպքում դրանք նորից լրացնել, մինչև որ անթերի լինի:

Մեծածավալ նյութն ինքնուրույն սովորելու հետաքրքիր տարբերակներից է Ալեքսեյ Կարպով ի առաջարկած «Բլոկ-սխեմաները» (Алексей Карпов,2007): Նա նշում է, որ ցանակացած աշխատանքի դ եպքում նյութը պետք է ներկայացնել կամ է լ ընկալել «ոչ թե մեկ մութ պարկում՝ կույտի ձևով», այլ իմաստով միմյանց հետ կապված մասերով: Սա մտածողության կարևոր վիճակ է: Իսկ ի՞նչ է բլոկ-սխեման: Վերցնում ենք թուղթ և նրա վրա մեզ հարմար ցանկացած տարբերակով կատարում գրառումներ (նոթագրումներ)՝ հիմնական գաղափարներ, եզրույթներ, փաստեր, հասկացություններ, սահմանումներ, բանաձևեր: Այստեղ կարող են լինել նկարներ, գծագրեր, աղյուսակներ: Կարող ենք օգտագործել գրիչներ, մարկերներ, գունավոր մատիտներ: Նշված տեղեկատվության ցանկացաց մասնիկ կարող ենք ներառել երկրաչափական պատկերների մեջ և ցույց տալ դրանց միջև եղած տրամաբանական կապերը: Բլոկ-սխեմաները մեր մտածողության արդյունքն են, դրանց միջոցով գրավոր աշխատանքի կամ քննության պատրաստվելը և՛ հաճելի է, և՛ օգտակար:

Ինքնուրույն ուսումնառության ընթացքում շատ կարևոր է ուսուցչի կողմից հետադարձ կապի տրամադրումը: Իմ փորձից կարող եմ նշել, որ առավել արդյունավետ է

գրավոր հետադարձ կապի տրամադրումը, քանի որ այն աշակերտներին ինքնամշտադիտարկման հնարավորություն է տալիս: Նրանք կարողանում են ինքնուրույն գտնել թերությունները, սխալները և շտկել դրանք: Յուրաքանչյուր աշխատանքից հետո տրամադրված հետադարձ կապը, ժամանակ առ ժամանակ դրանց ընթերցումն աշակերտներին օգնում է գրանցել սեփական զարգացումը ինքնուրույ ն ուսումնառության ընթացքում: Իմ կարծիքով արդեն անցել են այն ժամանակները, երբ աշակերտը պասսիվ դաս լսող կամ կատարող է: Այժմ աշակերտներին ինքնուրույն ուսումնառության միջոցով պետք է դարձնել նախաձեռնող, ստեղծագործող, համագործակցող:

Ինքնուրույն ուսումնառության ընթացքում շատ կարևոր է նաև ինքնագնահատումը, որը կարել է կատարել, օրինակ, ինքնագնահատման տարբեր հարցաթերթիկների լրացման միջոցով: Իմ փորձառությունից կարող եմ նշել, որ աշակերտներին դա դուր է գալիս: Նման հարցաթերթիկները կազմելիս կիրառել եմ Բլումի տաքսոնոմիայի բայերը: Հետաքրքիր է նաև սովորողների կողմից փոխադարձ գնահատումը, նրա արդյունքների վերլուծությունը, որը մեծացնում է փոխվստահությունը, նպաստում է ակտիվ համագործակցությանը, բացառում օտարացումը:

Ինքնուրույն ուսումնառության արդյունքում այն ժամանակը, որն ուսուցիչները ծախսում են որևէ թեմայի դասավանդման վրա, կարող են օգտագործել մշտադիտարկման, ինչպես նաև ինքնուրույն ուսումնառության առաջադրանքները կատարելիս աշակերտներին օգնելու համար: Որպես ինքնուրույն ուսումնառության արդյունքներ կարելի է նշել Փեթթիի հետևյալ դիտարկումները.

- աճում է սովորողների մոտիվացիան,
- նպաստում է սովորողների `ինքնուրույն սովորելու հմտությունների զարգացմանը, որը շատ կարևոր է ԲՈՒՀ-ում հետագա ուսումնառության, ինչպես նաև մասնագիտական հետագա գործունեության համար,
- սովորողները կարող են աշխատել իրենց տեմպին և ուսումնառության ոճին համապատասխան,
- ուսումնառության ընթացքում ընդմիջումներ անելը, որը դուր է գալիս սովորողներին
- ավելի խորքային ուսուցում,
- սովորողներն ի վերջո հայտնաբերում են, որ կարող են սովորել առանց ուսուցչի:

Ինքնուրույն ուսումնառությունը, սակայն, չի ենթադրում ուսուցչի անգործություն: Ուսուցչի դերը շատ մեծ է արդյունավետ ինքնուրույն ուսումնառություն ապահովելու համար:Նա պետք է մշակի ինչպես կարճաժամկետ՝ մեկ դասի շրջանակում, այնպես էլ երկարաժամկետ առաջադրանքներ, միշտ լինի աշակերտին օգնողի, աջակցողի դերում, կատարի մշտադիտարկում, շտկումներ, տրամադրի հետադարձ կապ, հետևի սխալների շտկմանը:Ըստ Անգլիայի դասավանդման գլխավոր խորհրդի «ուսուցիչները պետք է

պլանավորեն դասարանային այնպիսի աշխատանքներ, որոնք խթան կհանդիսանան ստեղծագործական մոտեցման և պատասխանների բազմազանության համար, օրինակ՝ աշակերտներին հնարավորություն տալ սեփական աշխատանքը ներկայացնելու տարբեր եղանակներով, այդ թվում՝ տեսահոլովակների, գրավոր և բանավոր ներկայացումների/հաղորդումների միջոցով»(Meyer et al.,2008):
Կարևոր է նաև դպրոցների դերը ինքնուրույն ուսումնառություն իրականացնելու հարցում: Դպրոցներում գործում են աշակերտական խորհուրդներ, որոնք որոշակի մասնակցություն ունեն դպրոցների գործունեությանը որպես խորհրդակցական մարմին: Սակայն շատ դեպքերում դրանք ձևական բնույթ ունեն: Դպրոցի ղեկավարությունը պետք է համապատասխան միջավայր ու պայմաններ ստեղծի աշակերտական ինքնավարության համար:

Գործնական համատեքստ

Ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ իմ հետազոտությունն իրականացրել եմ 11-րդ դասարանում, որտեղ դասավանդում եմ կենսաբանություն: Այն ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի բնագիտական ենթահոսքի դասարան է: Դասարանում սովորում է տասնհինգ աշակերտ. տասը աղջիկ և հինգ տղա: Բոլոր աշակերտներն էլ նպատակաուղղված են ընտրել այս հոսքը, նրանցից տասը մտադիր են ուսումը շարունակել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, մեկը՝ ԵՊՀ-ում, մեկ աշակերտ ցանկանում է կինեզիոլոգ դառնալ, երկուսը՝ բուժքույր: Բոլորն էլ մոտիվացված են, դասարանում վարքի կառավարման խնդիր չկա: Նրանք միշտ պատրաստ են ներկայանում դասերին, պատասխանատու են: Հաճույքով են մասնակցում առարկայական մրցույթներին, օլիմպիադաներին: Դասարանում տիրում է համերաշխ մթնոլորտ, փոխադարձ հարգանք, դասերի ընթացքում բոլորն ազատ արտահայտում են իրենց կարծիքը, լսում ընկերներին: Մեծամասնությունը բարձր ունակություններով աշակերտներ են: Բայց բարձր ունակություններ ունեցողներից որոշներն ավելի շատ կենտրոնացած են միասնական քննությունները բարձր միավորներով հանձնելու վրա, ավելի քիչ՝ ամեն թեմայի վերաբերյալ լրացուցիչ գիտելիքներ (ոչ շտեմարանային) ձեռք բերելու վրա: Հետաքրքիր էր նաև հետազոտության ընթացքում կիրառվող ինքնուրույն ուսումնառության ազդեցությունն այդ հանգամանքի վրա, արդյոք կփոխեն այդ աշակերտներն իրենց մոտեցումները: Ինչպես նշել էի վերևում, հետազոտության հիմնական նպատակը ինքնուրույն ուսումնառության կիրառման արդյունքում ընթացիկ առաջադիմության բարձրացումն է: Կարծում եմ այս գործիքը հետագայում լայն կիրառություն կգտի դպրոցում: Պատրաստ եմ իմ փորձով կիսվել գործընկերներիս հետ, ցույց տալով ինքնուրույն ուսումնառության արդյունավետությունը:

Հետազոտության ընթացք

Հետազոտություն կատարելու նպատակով անց եմ կացրել դասեր՝ ներառելով տարբեր բնույթի առաջադրանքներ, հարցադրումներ, կազմել եմ հարցաթերթիկներ՝ գործընկերներիս լրացման համար, աշակերտների համար կազմել եմ ինքնագնահատման թերթիկներ, հավաքագրել եմ դրանց տվյալներն ու վերլուծել:

Վերլուծության համար որպես մեկնարկային վիճակ վերցրել եմ հետազոտությունից առաջ տրված գրավոր աշխատանքի գնահատականները: Ըստ այդ տվյալների առաջադիմությունը կազմել է 100%, որակը՝ 73%: Գնահատականների հարաբերակցությունը հետևյալն է՝ «5» միավոր ստացել է մեկ աշակերտ, «6» միավոր՝ երեք աշակերտ, «7» միավոր՝ հինգ աշակերտ, «8» միավոր՝ երկու աշակերտ և «9» միավոր՝ չորս աշակերտ:



Ինքնուրույն ուսումնառության կիրառությամբ պարապել եմ վեց դաս, իսկ մեկ աշխատանք էլ հանձնարարել եմ մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել: Դա զույգերով աշխատանք էր, պետք է ստեղծեին տեսասահիկ մուտացիաների վերաբերյալ և ներկայացնեն: Ընդ որում, այն պարզապես ցուցադրում չպետք է լինի, այլ պետք է պարունակի առաջադրանք դասընկերների համար:

Երբ աշակերտներին ասեցի, որ այսուհետ ես դաս չեմ բացատրելու, փորձելու են սովորել ինքնուրույն, անակնկալի եկան, մտածելով, որ անհասկանալի հարցեր կունենան, գուցե նրանցից ոչ ոք չկարողանա պատասխանել այդ հարցերին: Բայց երբ ասեցի, որ հիմնական նպատակը նրանց ինքնուրույն աշխատելն ու դրա արդյունավետության վերլուծությունն է, իսկ բոլոր անհասկանալի հարցերը կստանան իրենց պատասխանները, նրանց անհանգստությունը փարատվեց, քանի որ ինքնուրույն սովորելը, լրացուցիչ աշխատանք կատարելը նրանց համար նորություն չէր:

Յուրաքանչյուր դասի համար սահմանել եմ նպատակներ և դրանցից բխող վերջնարդյունքներ:Յուրաքանչյուր դասի ավարտից հետո գրել եմ անդրադարձ:Ներկայացնեմ մեկ դասի օրինակով:

Դասի թեման էր «Մոդիֆիկացիոն փոփոխականություն: Արտաքին գործոնների ազդեցությունը հատկանիշների և հատկությունների ձևավորման վրա»: Դասի նպատակը աշակերտների՝ ինքնուրույն գիտելիքների ձեռք բերումն էր մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերի, դրանց առանձնահատկությունների և նշանակության վերաբերյալ: Վերջնարդյունքները, որոնք բխում էին նպատակներից, հետևյալն էին. նկարագրել մոդիֆիկացիոն փոփոխականությունը, թվարկել մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերը, համեմատել մոդիֆիկացիոն և գենոտիպային փոփոխականությունները, վերլուծել մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերը ոչ դասագրքային օրինակներով, կշռադատել միջավայրի պայմանների ազդեցության նշանակությունը մոդիֆիկացիոն փոփոխականության առաջացման համար, տարբերակել մոդիֆիկացիոն փոփոխականության նշված ձևերը փա՞ստ են, թե տեսակետ: Դասն ընթացավ պլանին համապատասխան:Նախորդ դասը մտագրոհի միջոցով ամփոփելուց հետո աշակերտներին հանձնարարեցի կարդալ նոր դասը, զույգերով քննարկել, տետրում կատարել գրառումներ մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերի վերաբերյալ, դուրս գրել նոր եզրույթները, անհասկանալի հարցերը, մտածել օրինակներ մոդիֆիկացիոն փոփոխականության տարբեր ձևերի վերաբերյալ, իսկ ես այդ ընթացքում շրջում էի դասարանում, հետևում աշակերտների աշխատանքին, հարց ունեցողները ձեռք էին բարձրացնում, մոտենում և ուղղորդում էի նրանց: Այնուհետև, օգտվելով անվանակիր թերթիկներից կատարեցի հարցում, բոլորը հավասարապես ընդգրկված էին, իրար շարունակելով պատասխանում էին հարցերին, գրատախտակին գրում նոր եզրույթները, բացատրում դրանք: Աշակերտները կարողացել էին ինքնուրույն սովորել դասը, մտածել մոդիֆիկացիոն փոփոխականության տարբեր ձևերի վերաբերյալ օրինակներ և ներկայացնել, համեմատել մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերը, գենոտիպային և ֆենոտիպային փոփոխականությունները: Նրանք վերլուծեցին միջավայրի դերը հատկանիշների ձևավորման հարցում, փաստերով ներկայացրին այն: Դասի վերջին հատվածում կազմեցին հնգյակ `դրսևորելով իրենց ստեղծագործական հմտություններ և լրացրեցին ինքնագնահատման թերթիկ(տե՛ս հավելված 7): Այդ թերթիկներն ընթերցելուց հետո պարզվեց, որ աշակերտները կարևորեցին այն, որ առանց ուսուցչի բացատրելու կարողացան ինքնուրույն սովորել դասը, ներկայացնել ոչ դասագրքային օրինակներ: Նրանց համար հայտնություն էր ոչ ադապտիվ փոփոխականությունը, իրենք իրենց կարող են գովել այն բանի համար, որ տուն կգնան դասը լիովին հասկացած ու սովորած, որ կարողացան իրենց ներդրումն ունենալ դասը հետաքրքիր դարձնելու համար,տետրում ավելի շատ աշխատեցին: Դասընկերներին կարող են գովել ստեղծագործականության, նրանց միջոցով դասը հեշտ սովորելու, հետաքրքիր օրինակներ բերելու համար, բոլորին

շատ դուր եկավ հնգյակ կազմել ն ու ներկայացնելը, սովորելիս գրեթե չդժվարացան: Բոլոր աշակերտները գնահատվեցին. «6»՝ երկու աշակերտ, «7»՝վեց աշակերտ, «8»՝երեք աշակերտ ,«9»՝ չորս աշակերտ: Գնահատումը կատարեցի ըստ տրված պատասխանների ամբողջականության,հստակության, բերված ոչ դասագրքային օրինաների: Արդյունքները գոհացնող են:



Հաջորդ դասը գործնական աշխատանք էր: Թեման « Մոդիֆիկացիոն փոփոխականության վիճակագրության ուսումնասիրությունը բույսերի (կարտոֆիլի պալարներ, նոճու և մշտադալար պարտիզակ բույսի տերևներ) օրինակով»: Կենսաբանության դասերն առանց գործնական աշխատանքների արդյունավետ չեն լինի: Դասի նպատակը աշակերտների՝ ինքնուրույն գործնական հմտությունների ձեռքբերումը, փորձի արդյունքների հիման վրա եզրահանգում կատարելն էր: Իսկ վերջնարդյունքներն էին. նկարագրել ուսումնասիրվող հատկանիշները՝ կարտոֆիլի պալարների աչքերի թիվը, տերևների երկարությունը, թվարկել հատկանիշների տարբերակների թիվը և հանդիպման հաճախականությունները, համեմատել աշխատանքի ընթացքում ստացված տվյալները, վերլուծել հաշվարկներից ստացած արդյունքները, կշռադատել նույն բույսի վրա աճող տերևների վրա միջավայրի ազդեցության տարբերությունները, ստեղծել (կազմել, կառուցել) հատկանիշների վարիացիոն շարքը և կառուցել վարիացիոն կոր, եզրահանգել հատկանիշի հանդիպման միջին արժեքի վերաբերյալ:

Դասը լիովին ծառայեց նպատակին: Դրա մասին են վկայում ստացված վերջնարդյունքները : Աշակերտներն ինքնուրույն կատարեցին գործնական աշխատանքը, կատարեցին չափումներ, հաշվարկներ: Խմբում նրանք աշխատանքի բաժանում կատարեցին. չափել, թվային տվյալները գրանցել, հաշվարկել, միասին վերլուծել, ինչպես նաև համագործակցել մյուս խմբերի հետ, կիսվել սեփական փորձառությամբ, համեմատել ստացված տվյալները, դրանց հիման վրա կատարել համապատասխան եզրահանգում, գրել եզրակացություն: Տետրում աշխատեցին խնամքով: Բոլոր աշակերտները գնահատվեցին: Արդյունքները հետևյալն են. «6»՝երկու աշակերտ, «7»՝ երեք աշակերտ, «8»՝վեց աշակերտ, «9»՝չորս աշակերտ: Արդյունքները լավ են: Ինքնուրույն ուսումնառությունը նրանց ավելի է ոգևորում:



Նշված բոլոր աշխատանքները կարճաժամկետ էին, քանի որ հետազոտությունը վերաբերում էր ընթացիկ առաջադիմությանը: Հանձնարարել էի ևս մեկ աշխատանք կատարել և ներկայացնել մեկ շաբաթվա ընթացքում. ստեղծել տեսասահիկ մուտացիաների տարբեր ձևերի վերաբերյալ, որոնք պետք է ընդգրկեին նաև առաջադրանքներ: Աշխատանքը պետք է կատարեին զույգերով: Յուրաքանչյուր զույգի հանձնարարել էի մուտացիայի մեկ ձև կամ դրանց հետ կապված երևույթ՝ կրկնություններից խուսափելու համար: Զույգերի ընտրությունն ըստ իրենց ցանկության էր:

Բոլորն էլ սահմանված ժամանակահատվածում ներկայացրին աշխատանքները: Որոշ աշխատանքներում կային տեխնիկական թերություններ, օրինակ՝ տեսասահիկում ընտրված դիզայնը շատ գունագեղ էր, գրված տեքստն ու նկարները լավ չէին երևում, տեքստային հատվածները շատ երկար էին: Նրանց հնարավորություն տվեցի շտկել և ներկայացնել: Յուրաքանչյուր աշխատանք ավարտվում էր հարցադրումներով, որոնց պատասխանում էին մյուս զույգերը: Այս առաջադրանքը փաստեց սովորողների պատասխանատվությունը և համագործակցային հմտությունները, նրանք հաջողությամբ

աշխատեցին զույգերով և ժամանակին հանձնեցին առաջադրանքները: Լավագույն աշխատանքները կպահպանվեն հետագայում ավագ դպրոցի մյուս աշակերտների ուսումնառության ընթացքում կիրառելու համար:

Տվյալների մշակում և վերլուծություն

Թեման ավարտելուց հետո տվեցի գրավոր աշխատանք, որի արդյունքները հետևյալն էին. առաջադիմությունը՝ 100%, որակը՝87%: «6» ստացավ 2 աշակերտ, « 7»՝ 4 աշակերտ, «8»՝ 4 աշակերտ, «9»՝ 5 աշակերտ: Արդյունքները գոհացնող են: Նախորդ թեմատիկ գրավորների համեմատ աճել է բարձր միավորներ ստացողների թիվը: Այժմ դասարանի առաջադիմության պատկերը հետևյալն է.



Ինչպես երևում է դիագրամից, «5» ստացող չկա, «6» գնահատվել են 2 աշակերտ, «7»՝ 4 աշակերտ, «8»՝ 4 աշակերտ, «9»՝ 5 աշակերտ: Որակի ցուցանիշն աճել է 15% - ով:

Անցկացրած այս դասերի ընթացքում պարզեցի, որ այն աշակերտները, ովքեր մինչ այդ առանձնապես ոգևորությամբ չէին ընդունում շտեմարանային առաջադրանքներից դուրս լրացուցիչ ինքնուրույն աշխատանքը, տարբեր աղբյուրներից օգտվելը, տեղեկատվություն հավաքել և սովորելը, աստիճանաբար սկսեցին ավելի խանդավառված աշխատել լրացուցիչ նյութի վրա: Նրանք հիմնականում սովոր էին, որ իրենց փոխարեն ես անեի դա ու պատրաստ մատուցեի: Մի կարևոր փաստ ևս արձանագրեցի համեմատաբար թույլ ունակությունների տեր աշակերտների հետ կապված: Ցանկացած առաջադրանք, որ հանձնարարում էի, ձգտում էին առաջինն իրենք կատարել, ընկերներից հետ չմնալ, ավելի շատ աշխատել, տետրերում ավելի շատ գրառումներ կատարել: Ինքնուրույն ուսումնառությունը նրանց ավելի պատասխանատու

դարձրեց, նրանք գիտակցում էին, որ հույսը պետք է դնեն իրենց վրա: Իհարկե, անհրաժեշտության դեպքում դիմում էին ինձ ինչպես դեմ առ դեմ, այնպես էլ առցանց, օգնություն ստանալու նպատակով: Աշակերտներն ավելի կատարելագործեցին իրենց համագործակցային հմտությունները տարբեր աշխատանքների ընթացքում: Մինչ այդ էլ նրանք ունեին այդ փորձը, բայց մի քայլ առաջ ընթացան:

Հետազոտական աշխատանքի կարևոր մաս է կազմում վկայությունների հավաքագրումը, որն իրականացրել եմ գործընկերներիս և աշակերտների հարցումների միջոցով: Այդ նպատակով կազմել եմ հարցաթերթիկներ: Լրացված հարցաթերթիկները հավաքել եմ և կատարել վերլուծություն: Աշակերտների լրացրած հարցաթերթիկների(տե՛ս հավելվածը) տվյալների վերլուծությունը ներկայացնում եմ ստորև:

Գնահատի՛ր ինքդ քեզ՝ շրջանակի մեջ առնելով համապատասխան թիվը:

Միջին արժեք(1-10)

1.	Աճել է սովորելու նկատմամբ իմ մոտիվացիան	7,8
2.	Դասերն ավելի հետաքրքիր են դարձել	9,5
3.	Ուսուցումն ավելի խորքային է	8,8
4.	Կարողանում եմ պատասխանել հարցադրումներին	8,2
5.	Ավելի ինքնավստահ եմ դարձել	8,4
6.	Ավելի պատասխանատու եմ դարձել	7,9

7.	Ուսուցչի ընտրած մեթոդներն օգնում են ինձ մտածել և աշխատել	9,2
8.	Կարողանում եմ ինքս հարցադրումներ կազմել	7,9
9.	Կարողանում եմ ձևակերպել միտքս, ասելիքս	7,7
10.	Կարողանում եմ թիմով կամ զույգով աշխատել	8,7
11.	Կարողանում եմ համեմատել կենսաբանական երևույթները	8,5
12.	Կարողանում եմ կատարել վերլուծություն	7,9
13.	Կարողանում եմ տարբերակել (փա՞ստ է, թե՞ տեսակետ)	8
14.	Կարողանում եմ ճանաչել և կիրառել	8,2
15.	Կարողանում եմ եզրահանգումներ կատարել	8,7
16.	Կարողանում եմ տնօրինել ժամանակս	7,9

`

Ինչպես երևում է աղյուսակից ինքնագնահատման ցուցանիշների միջին արժեքները տատանվում են 7,7 – 9,5 –ի սահմաններում: Համեմատաբար բարձր արժեք ուներ երկրորդ՝ «Դասերն ավելի հետաքրքիր են դարձել» ցուցանիշը, իսկ ամենացածրը՝ իններորդ կետին համապատասխան ցուցանիշը՝ «Կարողանում եմ ձևակերպել միտքս, ասելիքս»: Առաջին հայացքից որոշ տվյալներ համեմատաբար ցածր են թվում, օրինակ՝ մոտիվացիայի աճի վերաբերյալ ցուցանիշի միջին արժեքը: Դա բացատրվում է նրանով, որ այս դասարանի աշակերտները մոտիվացվելու խնդիր չունեին: Աղյուսակի տվյալներից կարելի է եզրակացնել ինքնուրույն ուսումնառության արդյունավետության մասին:

Հարցումներ եմ իրականացրել նաև գործընկերներիս շրջանում: Այդ նպատակով կազմել եմ հարցաթերթիկ և խնրել նրանց լրացնել: Հարցաթերթիկի բովանդակությունը(տե՛ս հավելված 9) ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ էր: Լրացնելով հարցաթերթիկը, նրանք իրենց կարծիքները ներկայացրին հետազոտության թեմայի վերաբերյալ: Հարցվածների մեջ կային տարբեր տարիքի ուսուցիչներ, հետաքրքիր էր իմանալ բոլորի կարծիքը: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հարցվածների 100% -ի կարծիքով աշակերտները կարող են առանց ուսուցչի բացատրության սովորել դասը կախված թեմայի բարդությունից: Հարցվածների 70%- ը կարծում է, որ եթե աշակերտը ցանկություն չունի սովորելու, ապա ինքնուրույն ուսումնառությունը չի կարող նպաստել սովորելու հանդեպ մոտիվացիայի բարձրացմանը: Հարցման բոլոր մասնակիցները գերադասում են աշակերտակենտրոն ուսուցումը: Հարցման մասնակիցների 70% -ը իր պրակտիկայում հաճախ է կիրառում ինքնուրույն ուսումնառության մեթոդը, իսկ 30% -ը կարծում է,որ կարելի է կիրառել: Հարցմանը մասնակցածների 40% -ի կարծիքով ինքնուրույն ուսումնառությունն արդյունավետ է միայն գործնական աշխատանքների դեպքում, իսկ 60%-ի կարծիքով՝ ինչպես գործնական,այնպես էլ տեսական դասերի դեպքում: Հարցման մասնակիցների 90%-ը կարծում է, որ ինքնուրույն ուսումնառությունը կնպաստի աշակերտների պատասխանատվության և ընթացիկ առաջադիմության բարձրացմանը: Հարցմանը մասնակցածների 95% -ը գտնում է, որ ինքնուրույն ուսումնառությունը կարող է ապահովել ավելի խորքային ուսուցում, միայն մեկ ուսուցիչ (ավագ սերնդի ներկայացուցիչ) կարծում է, որ ավելի մակերեսային ուսուցում է ապահովում: Հարցաթերթիկի վերջում կարող էին մտքեր ավելացնել: Մեջբերեմ մի քանի օրինակ. «Ներկա կրթական համակարգում ինքնուրույն ուսումնառությունը չի կարող արդյունավետ լինել», «Ինքնուրույն ուսումնառության դեպքում յուրաքանչյուր սովորող պետք է իմանա աշխատանքի իր բաժինը, ինչպե՞ս կատարի, ինչու՞ կատարի, ժամանակին հաշվետվություն ներկայացնի խմբին կամ ուսուցչին», «Ինքնուրույն ուսումնառությունը նպաստում է ինքնուրույն որոշումներ կայացնելուն, զարգացնում վերլուծական կարողությունները »: Բերված բոլոր տվյալներից կարելի է եզրակացնել, որ հարցման բոլոր մասնակիցները դրական վերաբերմունք ունեն ինքնուրույն ուսումնառության նկատմամբ, կիրառում են այն: Ես էլ իմ փորձը կներկայացնեմ նրանց նրանց, կնպաստեմ դպրոցում ինքնուրույն ուսումնառության ավելի լայն ու արդյունավետ կիրառմանը: Իհարկե, որոշ վերապահումներով համաձայն եմ այն մտքի հետ, որ Հայաստանի Հանրապետության ներկա կրթական համակարգում ինքնուրույն ուսումնառությունը պակաս արդյունավետ է, նաև կարծում եմ, որ փոխելով ինքներս մեզ, շատ բան կարող ենք փոխել ուսուցման և ուսումնառության գործընթացում: Համաձայն չեմ նաև գործընկերներիցս մեկի այն մտքի հետ, որ ինքնուրույն ուսումնառությունը խորքային ուսուցում չի ապահովում: Հետազոտության ընթացքում բազմիցս համոզվեցի դրանում: Տեղեկատվության հավաքագրումը, դասակարգումը, վերլուծությունը, ընկերների հետ քննարկումը, ինքնաստուգումը, ինքնագնահատումը , առաջադրանքը նորից հանձնելու

հնարավորությունը ավելի խորքային ուսուցում են ապահովում: Սովորողներին շատ ոգևորում է խրախուսելն ու քաջալերելը, նույնիսկ շատ փոքր հջողությունների դեպքում, որն իմ ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասն է կազմում:

Ամփոփում

Հետազոտության ընթացքում պարզեցի, որ սովորողները հավանեցին ինքնուրույն ուսումնառությունը: Ես աստիճանաբար նվազեցնում էի իմ մասնակցությունը, ավելացնում նրանց աշխատանքը: Նրանք մեծ պատասխանատվությամբ էին մոտենում հանձնարարված ցանկացած աշխատանքի:

Աճ նկատվեց նրանց համագործակցային հմտությունների մեջ: Դասարանում առկա էր առողջ մրցակցություն, բայց դրանով հանդերձ նրանք զույգերով, խմբերով ակտիվ աշխատում էին: Ոգևորվում էին խմբի, դասարանի ցանկացած անդամի հաջողությամբ, պատրաստ էին ոչ միայն ինքնուրույն սովորել, այլ նաև սովորեցնել:

Համեմատաբար ուժեղ կարողություններով աշակերտները հաճույքով են աշխատել ունակություններով իրենց զիջող ընկերների հետ, որի արդյունքում դասարանի ընդհանուր որակական ցուցանիշն աճեց 14%-ով: Նվազեց համեմատաբար ցածր գնահատականներ ստացողների թիվը, եթե հետազոտությունից առաջ աշակերտներից մեկի (Մելինեի) միջին գնահատականը 5 –ն էր, ապա հետազոտության ընթացքում աճեց մեկ նիշով: Նա շատ ոգևորված էր աշխատում, ցանկանում էր ընկերներից հետ չմնալ, զույգերով աշխատելիս հաճախ միանում էր Անժելիկային , իսկ նա դասարանի գերազանցիկն է: Դա էլ նպաստեց Մելինեի առաջադիմության աճին: 6 և 7 միավորներ ստացողների թիվն մեկով նվազել է, իսկ 8 և 9 միավորներ ստացողների թիվն՝ աճել:

Այս ընթացքում աշակերտներն աչքի ընկան բարձր պատասխանատվությամբ: Նրանք կարողացան պլանավորել իրենց աշխատանքները, ճիշտ կառավարել ժամանակը: Նրանք տանը ավելի շատ էին աշխատում, շատ էին օգտվում լրացուցիչ աղբյուրներից: Տետրերում ավելի շատ գրառումներ էին անում: Այն աշակերտները, որոնց հիմնական նպատակը շտեմարանային առաջադրանքները սերտելն ու բարձր միավորներով ԲՈՒՀ ընդունվելն է, հասկացան, որ այդ կերպ մնայուն գիտելիք չեն ապահովի, սկզբում ոչ այդքան ոգևորված, բայց ընթացքում ավելի շատ էին կենտրոնանում թեմայի ավելի խորությամբ ուսումնասիրման, ավելի շատ լրացուցիչ աշխատանք կատարելու, վերլուծություններ կատարելու, համեմատելու, եզրահանգումներ կատարելու, հարցադրումներ կազմելու վրա: Աշակերտները շատ հավանեցին հաճախակի հետադարձ կապի տրամադրումը: Դա նրանց հնարավորություն տվեց ինքնամշտադիտարկել, վեր հանել սեփական թերությունները, գրանցել առաջընթացը: Սխալների ինքնուրույն շտկումը ավելի արդյունավետ է: Սովողները շատ հավանեցին նաև հայտորոշիչ հարցադրումներով ձևավորող գնահատումը, ինքնագնահատումն ու

փոխադարձ գնահատումը: Նրանք կարծիք հայտնեցին, որ լավ կլիներ բոլոր առարկաների դասերն այս ձևով պարապեին: Միավորային գնահատականներն ինչպես նախկինում, առավել ևս հիմա, նրանց առանձնապես չեն հետաքրքրում, նրանց կարծիքով գիտելիք ստանալու լավագույն միջոց է սեփական սխալների վրա սովորելը:

Ամփոփելով միտքս, նշեմ, որ իրոք ինքնուրույն ուսումնառությունը նպաստում է սովորողների առաջադիմության, մոտիվացիայի, վերլուծական, համագործակցային հմտությունների, պատասխանատվության աճին: Այն կարող է արդյունավետ լինել ինչպես գործնական, խնդիրների լուծման, այնպես էլ տեսական դասերի ընթացքում: Այս փորձառությունը ես կիրառեցի ավագ դպրոցի մեկ առանձին վերցրած հոսքային դասարանում և հասա նպատակիս: Այլ արդյունք կարող էր արձանագրվել հիմնական դպրոցում, կամ էլ ընդհանուր հոսքերի դասարաններում: Իմ կարծիքով նրանց մոտ պետք է համադրել ինքնուրույն ուսումնառությունը ակադեմիական ուսուցման հետ: Ես կշարունակեմ ինքնուրույն ուսումնառության կիրառությունը դասավանդման ընթացքում, իմ փորձը կտարածեմ ինչպես մեր դպրոցում, այնպես էլ համայնքում:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում հասա նպատակիս, ինքնուրույն ուսումնառությունն ունեցավ դրական ազդեցություն աշակերտների ընթացիկ առաջադիմության վրա: Դրա մասին վկայեց հետազոտությունից առաջ և հետո կատարված վերլուծությունը: Ինքնուրույն ուսումնառության կիրառությունը նաև դրականորեն փոխեց աշակերտների վերաբերմունքը խորքային ու մնայուն գիտելիքներ (ոչ շտեմարանային) ստանալու հանդեպ: Այս դիտարկումը չէի նախատեսել, բայց շատ կարևորում եմ և ուրախ եմ դրա համար:

Գրականություն

1.Дж. Петти, 2010, Современное обучение

2. Մեյեր Բ. և ուրիշներ(2001).«Ինչ է ինքնուրույն ուսումնառությունը և ինչ առավելություն է տալիս աշակեևտներին»

3. ГригорьеваЕ.Я., МалееваЕ.А. АВТОНОМИЯ УЧАЩИХСЯ КАК ПРИНЦИП ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ // Современные проблемы науки и образования. – 2014. – № 2.)

4. Mick Healey,2014 Developing Independent & Autonomous Learning HE Consultant and Researcher

5. Della M. A. Fazey & John A. Fazey Published online: 25 Aug 2010, The Potential for Autonomy in Learning: Perceptions of competence, motivation and locus of control in first-year undergraduate students):

6. Алексей Карпов,Ты умеешь хорошо учиться? !ст.22, 2007

Հավելված

Ինքնագնահատման թերթիկ՝

անավարտ նախադասություն

Անուն ազգանուն----------

Այսօր ես դասի ընթացքում	
Այսօր ես դասի ընթացքում	
Հետաքրքիր էր	
Դժվար էր	
Ինքս ինձ կարող եմ գովել, որ	
Կարող եմ գովել դասընկերներիս, որ	
Ամենից շատ ինձ դուր եկավ	
Ինձ համար կարևոր էր	

Անավարտ նախադասություն

Անուն ազգանուն--[illegible]----

Այսօր ես դասի ընթացքում	
Ես սովորեցի	թե ինչպես [illegible] գրքերից ստացած օգտակար տեղեկություններ տեղադրելու խոսքախոսություններ վրա:
Հետաքրքիր էր	Որ միևնույն փնտրելին պատրաստած օգտագործելիս տարբեր տարբեր պայմաններում, կարող են առաջանալ տարբերություններ:
Դժվար էր	Մեկ անգամ կարդալուց հետո խոսքախոսությունը բերան ցնցելը:
Ինքս ինձ կարող եմ գովել, որ	փորձեի որ ցանկ ժամանակ ավելի տեղեկություններ ունենալու և կարդալուց պատասխանել հարցերին:
Կարող եմ գովել դասընկերներիս, որ	փորձի որ բերան կա կարդալուց ինֆորմացիան ավելին ցույց:
Ամենից շատ ինձ դուր եկավ	Հետաքրքիր բնագրերը:
Ինձ համար կարևոր էր	Ինֆորմացիան օգտակարները բերելը:
Ինձ համար հայտնություն էր	Մուլտիմեդիայի խոսքախոսությունը բարձրացրեց դրական տրամադրություն:

Ինքնագնահատման թերթիկ

Անավարտ նախադասություն

Անուն ազգանուն՝ Աննա Բարսեղյան

Այսօր ես դասի ընթացքում՝	
Ես սովորեցի	որ փոխբարդությունը ունի գրելու և բնույթ որոշ ռեսուրսների խնայելու ճանապարհ
Հետաքրքիր էր	ինչպես ստանալ տեսնել որ բոլորը ճանաչողության և նոր կարծիքներ լսեցի
Դժվար էր	հիշեցնել թղթի ծղոտիկների փոխարարությունը գրելիս
Ինքս ինձ կարող եմ գովել, որ	հիմքերի ճանաչեցի ինչպես, տեսնել որ հաբուրդի որոշակի ցիրկիլ ունեք
Կարող եմ գովել դասընկերներիս, որ	օգնեցին մեզ ինչպես լսեր և ունկրիկ ճանաչողության ցուցադրելու
Ամենից շատ ինձ դուր եկավ	ինչպես մեզնում «հեղինակ» բառը.
Ինձ համար կարևոր էր	որ դեռ անհատականությունը էլի չճնշվեց և թղթի բարդությունը լիարժեք զարգացավ
Ինձ համար հայտնություն էր	ինչպես նոր ծնողներ, որ կարողանան ուղղորդել հոգեբանությունը, բանաստեղծությունը, որ որոշ երեխաներ ուրիշներին դասավանդեն ունեն.

Ինքնագնահատման թերթիկ

Անավարտ նախադասություն

Անուն ազգանուն---Սիրարին Զոհ---

Այսօր ես դասի ընթացքում՝	
Ես սովորեցի	Որ քեռնուրիայի փոփոխը. Ֆախրաց զեռնուրիան և Զոլզալայի կոլեգիաների փոխհարաբերությունները
Հետաքրքիր էր	Զոլզալայի ժողովուրդների գեղեցիկությունը և դրանց զարգացումը
Դժվար էր	Անկարի նամակը կարդալ ու ուսումնասիրելը
Ինքս ինձ կարող եմ գովել, որ	Որ շատ ծանր աշխատել գրելուց դասի վերաբերյալ:
Կարող եմ գովել դասընկերներիս, որ	Որ լավ յուրացրին նյութը
Ամենից շատ ինձ դուր եկավ	Դասի վարկանիշները և հնարավոր անելիքը ընտրությունը
Ինձ համար կարևոր էր	Դասի յուրացումը բարելավելու համար:
Ինձ համար հայտնություն էր	Ոչ մի բան

Ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ ինքնագնահատման թերթիկ

Անուն, ազգանուն Հեղուշ Ամիրբեկյան

Գնահատի՛ր ինքդ քեզ՝ շրջանակի մեջ առնելով համապատասխան թիվը:

1.	Աճել է սովորելու նկատմամբ իմ մոտիվացիան	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
2.	Դասերն ավելի հետաքրքիր են դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
3.	Ուսուցումնավելիխորքային՞է	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
4.	Կարողանում եմ պատասխանել հարցադրումներին	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
5.	Ավելի ինքնավստահ եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
6.	Ավելի պատասխանատու եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
7.	Ուսուցչի ընտրած մեթոդներն օգնում են ինձ մտածել և աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
8.	Կարողանում եմ ինքս հարցադրումներ կազմել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
9.	Կարողանում եմ ձևակերպել միտքս, .ասելիքս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
10.	Կարողանում եմ թիմով կամ զույգով աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
11.	Կարողանում եմ համեմատել կենսաբանական երևույթները	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
12	Կարողանումեմ կատարելվերլուծություն	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
13.	Կարողանում եմ տարբերակել (փա՞ստ է, թե՞ տեսակետ)	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
14.	Կարողանում եմ ճանաչել և կիրառել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
15.	Կարողանում եմ եզրահանգումներ կատարել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
16	Կարողանում եմ տնօրինել ժամանակս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ

Ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ ինքնագնահատման թերթիկ

Անուն, ազգանուն Դիանա Հովհաննիսյան

Գնահատի՛ր ինքդ քեզ՝ շրջանակի մեջ առնելով համապատասխան թիվը:

1.	Աճել է սովորելու նկատմամբ իմ մոտիվացիան	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
2.	Դասերն ավելի հետաքրքիր են դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
3.	Ուսուցումնավելիխորքային՞է	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
4.	Կարողանում եմ պատասխանել հարցադրումներին	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
5.	Ավելի ինքնավստահ եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
6.	Ավելի պատասխանատու եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
7.	Ուսուցչի ընտրած մեթոդներն օգնում են ինձ մտածել և աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
8.	Կարողանում եմ ինքս հարցադրումներ կազմել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
9.	Կարողանում եմ ձևակերպել միտքս, .ասելիքս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
10.	Կարողանում եմ թիմով կամ զույգով աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
11.	Կարողանում եմ համեմատել կենսաբանական երևույթները	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
12	Կարողանումեմ կատարելվերլուծություն	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
13.	Կարողանում եմ տարբերակել (փա՞ստ է, թե՞ տեսակետ)	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
14.	Կարողանում եմ ճանաչել և կիրառել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
15.	Կարողանում եմ եզրահանգումներ կատարել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
16	Կարողանում եմ տնօրինել ժամանակս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ

Ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ ինքնագնահատման թերթիկ

Անուն, ազգանուն Վազգեն

Գնահատի՛ր ինքդ քեզ՝ շրջանակի մեջ առնելով համապատասխան թիվը:

1.	Աճել է սովորելու նկատմամբ իմ մոտիվացիան	Ոչ այնքան	1	2	3	4	(5)	6	7	8	9	10	Շատ լավ
2.	Դասերն ավելի հետաքրքիր են դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
3.	Ուսուցումն ավելի խորքային է	Ոչ այնքան	1	2	3	4	5	(6)	7	8	9	10	Շատ լավ
4.	Կարողանում եմ պատասխանել հարցադրումներին	Ոչ այնքան	1	2	3	4	(5)	6	7	8	9	10	Շատ լավ
5.	Ավելի ինքնավստահ եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
6.	Ավելի պատասխանատու եմ դարձել	Ոչ այնքան	1	2	3	(4)	5	6	7	8	9	10	Շատ լավ
7.	Ուսուցչի ընտրած մեթոդներն օգնում են ինձ մտածել և աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	9	(10)	Շատ լավ
8.	Կարողանում եմ ինքս հարցադրումներ կազմել	Ոչ այնքան	1	2	3	4	5	(6)	7	8	9	10	Շատ լավ
9.	Կարողանում եմ ձևակերպել միտքս, .ասելիքս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
10.	Կարողանում եմ թիմով կամ զույգով աշխատել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	8	(9)	10	Շատ լավ
11.	Կարողանում եմ համեմատել կենսաբանական երևույթները	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ
12	Կարողանումեմ կատարելվերլուծություն	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
13.	Կարողանում եմ տարբերակել (փա՞ստ է, թե՞ տեսակետ)	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
14.	Կարողանում եմ ճանաչել և կիրառել	Ոչ այնքան	1	2	3	4	5	(6)	7	8	9	10	Շատ լավ
15.	Կարողանում եմ եզրահանգումներ կատարել	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	(7)	8	9	10	Շատ լավ
16	Կարողանում եմ տնօրինել ժամանակս	Ոչ այնքան	1	2	3	4	5	6	7	(8)	9	10	Շատ լավ

Հարցաթերթիկ ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ

1.Ձեր կարծիքով աշակերտները կարո՞ղ են յուրացնել դասն առանց ուսուցչի բացատրության

- Այո
- Միանշանակ՝ոչ
- ✓ Կախված է թեմայի բարդությունից

2.գերադասում եքաշակերտակենտրոն, թե՞ ուսուցչակենտրոն ուսուցումը

- ✓ Ավելի շատ՝աշակերտակենտրոն
- Ավելի շատ՝ ուսուցչակենտրոն
- Ուսուցչակենտրոն

3. Ձեր պրակտիկայում կիրառո՞ւմ եք ինքնուրույն ուսումնառության մեթոդը

- ✓ Հաճախ եմ կիրառում
- Չեմ կիրառում
- Կարելի է կիրառել

4.Ձեր կարծիքով ինքնուրույն ուսումնառությունը կարող է նպաստել սովորելու հանդեպ աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը

- ✓ Կարծումեմ՝ այո
- Եթե աշակերտը ցանկություն չունի սովորելու, ապա ոչինչ չի փոխվի
- Միայն հումանիտար առարկաների պարագայում

5.Ինքնուրույն ուսումնառությունն արդյունավետ է

- Միայն գործնական աշխատանքների դեպքում
- ✓ Ինչպես գործնական, այնպես էլ՝ տեսական դասերի դեպքում
- Երկարաժամկետ աշխատանքների դեպքում

6.Ինքնուրույն ուսումնառությունը

- Կնպաստի աշակերտների ընթացիկ առաջադիմության բարձրացմանը
- Կնվազեցնի աշակերտների պատասխանատվությունը
- ✓ Կնպաստի աշակերտների պատասխանատվության և ընթացիկ առաջադիմության բարձրացմանը

7. Ինքնուրույն ուսումնառությունն ըստ Ձեզ

- նպաստումէ թեմայի խորությամբ ուսուցմանը
- ✓ ապահովում է ավելի մակերեսային ուսուցում
- չի նպաստում աշակերտների հետաքրքրության շրջանակի լայնացմանը

Ինչ կավելացնեք Դեռ քննարկման ուսումնական գործընթաց ներգրավված կողմերի և թեմաներ ուշադրության կամ բացատրելու հնարավոր, բնագրային կարդալու (հրատ., բջջ. կարդալու (հեղինակավոր) դեպք ժամանակների պետք է հաշվեկշռվեն հեղինակների խմբերի կամ առանձին:

Հարցաթերթիկ ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ

1.Ձեր կարծիքով աշակերտները կարո՞ղ են յուրացնել դասն առանց ուսուցչի բացատրության

- Այո
- Միանշանակ՝ոչ
- (•) Կախված է թեմայի բարդությունից

2.գերադասում եքաշակերտակենտրոն, թե՞ ուսուցչակենտրոն ուսուցումը

- (•) Ավելի շատ՝աշակերտակենտրոն
- Ավելի շատ՝ ուսուցչակենտրոն
- Ուսուցչակենտրոն

3. Ձեր պրակտիկայում կիրառո՞ւմ եք ինքնուրույն ուսումնառության մեթոդը

- (•) Հաճախ եմ կիրառում
- Չեմ կիրառում
- Կարելի է կիրառել

4.Ձեր կարծիքով ինքնուրույն ուսումնառությունը կարող է նպաստել սովորելու հանդեպ աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը

- (•) Կարծումեմ՝ այո
- Եթե աշակերտը ցանկություն չունի սովորելու, ապա ոչինչ չի փոխվի
- Միայն հումանիտար առարկաների պարագայում

5.Ինքնուրույն ուսումնառությունն արդյունավետ է

- Միայն գործնական աշխատանքների դեպքում
- (•) Ինչպես գործնական, այնպես էլ՝ տեսական դասերի դեպքում
- Երկարաժամկետ աշխատանքների դեպքում

6.Ինքնուրույն ուսումնառությունը

- Կնպաստի աշակերտների ընթացիկ առաջադիմության բարձրացմանը
- Կնվազեցնի աշակերտների պատասխանատվությունը
- (•) Կնպաստի աշակերտների պատասխանատվության և ընթացիկ առաջադիմության բարձրացմանը

7. Ինքնուրույն ուսումնառությունն ըստ Ձեզ

- (•) նպաստումէ թեմայի խորությամբ ուսուցմանը
- ապահովում է ավելի մակերեսային ուսուցում
- չի նպաստում աշակերտների հետաքրքրության շրջանակի լայնացմանը

Ինչ կավելացնեք

Ինքնուրույն ուսումնառությունը նպաստում է- նաև ինքնուրույն որոշումներ կայացնելուն, պարզապես վերլուծական կարողություններ:

Հարցաթերթիկ ինքնուրույն ուսումնառության վերաբերյալ

1.Ձեր կարծիքով աշակերտները կարո՞ղ են յուրացնել դասն առանց ուսուցչի բացատրության

- Այո
- Միանշանակ՝ոչ
- (•) Կախված է թեմայի բարդությունից

2.գերադասում եքաշակերտակենտրոն, թե՞ ուսուցչակենտրոն ուսուցումը

- (•) Ավելի շատ՝աշակերտակենտրոն
- Ավելի շատ՝ ուսուցչակենտրոն
- Ուսուցչակենտրոն

3. Ձեր պրակտիկայում կիրառո՞ւմ եք ինքնուրույն ուսումնառության մեթոդը

- Հաճախ եմ կիրառում
- Չեմ կիրառում
- (•) Կարելի է կիրառել

4.Ձեր կարծիքով ինքնուրույն ուսումնառությունը կարող է նպաստել սովորելու հանդեպ աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը

- Կարծումեմ՝ այո
- (•) Եթե աշակերտը ցանկություն չունի սովորելու, ապա ոչինչ չի փոխվի
- Միայն հումանիտար առարկաների պարագայում

5.Ինքնուրույն ուսումնառությունն արդյունավետ է

- (•) Միայն գործնական աշխատանքների դեպքում
- Ինչպես գործնական, այնպես էլ՝ տեսական դասերի դեպքում
- Երկարաժամկետ աշխատանքների դեպքում

6.Ինքնուրույն ուսումնառությունը

- Կնպաստի աշակերտների ընթացիկ առաջադիմության բարձրացմանը
- Կնվազեցնի աշակերտների պատասխանատվությունը
- (•) Կնպաստի աշակերտների պատասխանատվության և ընթացիկ առաջադիմության բարձրացմանը

7. Ինքնուրույն ուսումնառությունն ըստ Ձեզ

- (•) նպաստումէ թեմայի խորությամբ ուսուցմանը
- ապահովում է ավելի մակերեսային ուսուցում
- չի նպաստում աշակերտների հետաքրքրության շրջանակի լայնացմանը

Ինչ կավելացնեք Դերկա կրճատված հանձնարարություն

Իմաստալից հանձնարարություն չի կարող արդյունավետ լինել: